



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1888

ՅԱՆ · ՓԵԲՐ · ՄԱՐՏ

## ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

1888

ԵՒՆՈՐ ՇՐՋԱՆ ՀԱՅԿԱՅ

**Բ Զ Ա Ն Հ Ա Յ Կ Ա Բ ...** կանխաւ իսկ այս  
տարրւան Ծրացուցին սկիզբը ծանուցինք թէ  
որչափ նշանաւոր է 1888 տարեթիւն մեր ազգին նը-  
կատմամբ նաեւ այնու զի իւր իին թուականին Երրորդ-  
շրջանն աւարտելով կը մտնէ 'ի Ձորըրդն, որոյ Վեր-  
ջառորութիւնը 1460 տարիներէ Վերջը պիտի Կնքէ մեր  
սերունդն, եթէ 1380 տարիներ ապրող ազգն յարա-  
կցել կարենայ յետ 1460 ամաց անցելըն հետ նաեւ  
այն ժամուն ներկայն:

ՀԱՅԻՆՑ ՇՐՋԱՆՆ... իւր գեղցիկ եւ գոյսրիկ անուամբ 'ի կիր ածեալ 'ի նախնաց, եւ յեսոյ տգիտութեան խաւարի մէջ Թաղուած Երկայն դարերով, Ճանօթացաւ վերստին զինքը գործածող ժողովրդեան՝ իւր նովիրական եւ պաշտելի հանճարոյ մի ծեռքով... Սարկաւագ Վարդապետի ՌՎ որ յազգայնոց կարդացեր է զբուռւկ Հաւընանց Հաւու. (Եւ կայ արդեօք



ազգային՝ որ զայն դեռ կարդացած կամ՝ ի լրոյ լսած չլինի) քաջ իսկ տեղեակ է արդէն թէ ինչ է այս Հայկայ Շըշանն, ե՞րբ սկսած, ու ինչ կերպով կը հաջուի եւ բաղդատով ուրիշ ազգաց հաստատուն շրջանաց հետո ուստի մեք մեր ընթերցողները այդ վերոյիշեալ սկզբնական աղբեր ուղարկելով (Հատոր Ա. էջ 76 - 104), կ'ախորժինք աստ մէջ քերեկ միայն նորա հետեւեալ վերջարան խօսքերն, թէ «Պարծանք է իրեն (Հայկայ) կամ իրեն յաջորդաց՝ այդ ՀԱՅԹԿԱՑ ՇԲՁԱՆՆ եւ ԹՌԻԱԿԱԱՆԸ Տանչնաւ, դնել եւ պահելը. պարծանք եւ պատիւ է մեր իմաստասէր Սարկաւագայ այլ՝ այս հին յիշատակս յարուցաները Հայկէն 3600 տարի ետեւ»... յաւելունք մենք ալ պարծանք եւ պատիւ է մեր արգոյ Հեղինակին վերոյիշեալ գրոց՝ յետ Սարկաւագայ զամնթանօթ մնացեալն վերստին կենդացընելն յազգիս... եւ դարձեալ աւարտենք իւր խօսքերով» Այս Գ Շըշանն պիտի լրանայ յամին 1888. յուրում օգոստոսի 11 - 23ն հինգշաբթի օր մը պիտի սկսի Դ շրջանն. զոր ամենայն սրտով կու մաղթեմ քեզի, Հայկակ, եւ ամենայն քու ժամանակակից ազգայնոց՝ որ երջանիկ սկզբնաւորութեամբ ըլլայ, եւ օգտակար միաւորութեամբ մը բոլոր Հայազգեացս»:

Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ն

